ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ. ԻՆՉ Է ՆԱ ԱՆՈՒՄ

Փրկագնման պատմության չորս փուլերը...

- Արարչագործություն
    - Ի՞նչ դեր ունի Սուրբ Հոգին արարչագործության մեջ:
- Անկում
    - Ինչպե՞ս է Սուրբ Հոգին վերաբերվում աշխարհի մեղքին:
- Փրկագնում
    - Ինչպե՞ս է Սուրբ Հոգին վերակերտում մեզ Քրիստոսի կերպարանքով:
- Իրագործում
    - Ինչպե՞ս է Սուրբ Հոգին ի կատար ածում մեր փրկությունը:

ՀՈԳԻՆ ԵՎ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեկ կարևոր կոչում...

- «Աստծո Հոգին»

Երկու կարևոր ճշմարտություն...

- Հոգին աշխարհին հայտնում է Աստծո <u>ներկայությունը</u>:

    - Նրա լիարժեք մասնակցությունը տեսնում ենք ամբողջ Սուրբ Գրքում:
    - Նա հատուկ դերակատարում ունի Նոր Կտակարանում:

- Հոգին ցույց է տալիս Աստծո գործող <u>զորությունը</u>:

    - Աստծո Խոսքը Նրա ամենազոր բառերն են:
    - Աստծո Հոգին Նրա ամենազոր շունչն է:

Երեք կարևոր թեմա...

- Հոգին <u>ստեղծագործում</u> է:

    - Հոգին գործում է Որդու հետ՝ կատարելու Հոր կամքը:

«Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»:
(Ծննդոց 1.2)

«Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր:
Նա սկզբում Աստծո մոտ էր: Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ: Նրանով էր կյանքը, և կյանքը մարդկանց լույսն էր»:
(Հովհաննես 1.1-3)

«Որ աներևույթ Աստծո պատկերն է՝ ամեն ստեղծվածներից առաջ ծնված: Որովհետև Նրանով ամեն բան ստեղծվեց, ինչ որ երկնքում, և ինչ որ երկրի վրա է՝ երևողները և չերևողները, թե՛ աթոռները, թե՛ տերությունները, թե՛ պետությունները, թե՛ իշխանությունները, ամեն բաները Նրանով և Նրա համար ստեղծվեցին»:
(Կողոսացիս 1.15-16)

- Հոգին կյանք է տալիս ամբողջ արարչությանը:

«Նրա Հոգով երկինքը զարդարանք է, Նրա ձեռքը կազմել է փախչող Վիշապին»:
(Հոբ 26.13)

«Սրանք ամենքը քեզ են սպասում, որ նրանց կերակուր տաս իրենց ժամանակին: Դու տալիս ես նրանց, և նրանք հավաքում են, Դու բաց ես անում Քո ձեռքը, և կշտանում են բարիքով: Երբ որ ծածկում ես Քո երեսը, սարսափում են: Երբ որ վեր ես առնում նրանց հոգին, մեռնում են և իրենց հողին են դառնում: Հոգիդ ուղարկում ես, ստեղծվում են, և Դու նորոգում ես երկրի երեսը»:
(Սաղմոս 104.27-30)

- Հոգին կյանք է տալիս բոլոր արարածներին:

«Եվ Եհովա Աստվածը հողի փոշուց շինեց մարդուն և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ»:
(Ծննդոց 2.7)

«Աստծո Հոգին է ստեղծել ինձ, և Ամենակարողի շունչը՝ ինձ կյանք տվել»:
(Հոբ 33.4)

- Հոգին <u>պահպանում է</u>:

- Նա է աստվածային կարգը Սահմանողը:

«Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»:
(Ծննդոց 1.2)

- Նա է աստվածային Պահապանը:

«Եթե Նա Իր վրա դարձնի Իր սիրտը, Իր հոգին և Իր շունչը ժողովի Իր մոտ, ամեն մարմին միասին կմեռնի, և մարդս հողը կդառնա»:
(Հոբ 34.14-15)

- Նա պահպանում է մարդու շունչը:

«Եվ Եհովան ասաց. «Իմ հոգին մարդու վրա միշտ չմնա, այն պատճառով, որ նա մարմին է, այլ նրա օրերը հարյուր քսան տարի լինեն»»:
(Ծննդոց 6.3)

«Որ քանի որ տակավին շունչս ինձանում է, և Աստծո Հոգին կա իմ ռունգերի մեջ»:
(Հոբ 27.3)

- Նա պահպանում է մարդու հոգին:

«Սուրբ սի՛րտ ստեղծիր ինձանում, ո՛վ Աստված, և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում: Դեն մի՛ գցիր ինձ Քո երեսից, և Քո Սուրբ Հոգին վեր մի՛ առ ինձանից: Դարձյալ տո՛ւր ինձ Քո փրկության ուրախությունը և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ»:
(Սաղմոս 51.10-12)

«Որովհետև այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը, հավիտենականության մեջ բնակվողը, և Որի անունը Սուրբ է. «Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղում, բայց լինում եմ կոտրած և խոնարհ հոգի ունեցողի հետ, որ խոնարհների հոգին կենդանացնեմ և կենդանացնեմ սրտով կոտրվածներին: Որովհետև Ես չեմ վիճելու հավիտյան և չեմ բարկանալու միշտ, նրա համար, որ կնվաղեին Իմ առաջ հոգին և ոգիները, որոնք Ես ստեղծել եմ»»:
(Եսայիա 57.15-16)

- Նա է աստվածային Մատակարարը:

«Եվ Քո բարի Հոգին տվեցիր նրանց իմաստուն անելու համար: Եվ Քո մանանան չարգելեցիր նրանց բերանից և ջուր տվեցիր նրանց՝ նրանց ծարավելիս»:
(Նեեմիա 9.20)

«Եվ Նա հին օրերը, Մովսեսին և Իր ժողովրդին հիշեց: «Ո՞ւր է Նա, որ վեր հանեց նրանց ծովից Իր հոտի հովիվով, ո՞ւր է Նա, որ նրանց մեջ դրեց Իր Սուրբ Հոգին»»:
(Եսայիա 63.11)

- Հոգին <u>տիրում է</u>:

    - Նա վերահսկում է բնությունը:

«Խոտը չորանում է՝ ծաղիկը թառամում, որովհետև Տիրոջ Հոգին փչեց նրա վրա. իրավ ժողովուրդը խոտ է»:
(Եսայիա 40.7)

    - Նա ուղղորդում է պատմությունը:

«Որոնե՛ք Տիրոջ գրքում և կարդացե՛ք, սրանցից մեկ հատը չի պակասի, մեկի մոտ իր ընկերը պակաս չի լինի, որովհետև Նրա բերանն է հրամայել, և Նրա Հոգին Ինքն է ժողովելու նրանց: Եվ Նա Ինքը նրանց վրա վիճակ է գցել, և Նրա ձեռքը նրանց բաժանել է լարով, հավիտյան պիտի ժառանգեն նրան. դարեցդար պիտի բնակվեն նրանում»:
(Եսայիա 34.16-17)

«Սովորեցրո՛ւ ինձ կատարել Քո կամքը, որովհետև Դու ես իմ Աստվածը, Քո բարի Հոգին թող առաջնորդի ինձ դեպի ուղիղ երկիր»:
(Սաղմոս 143.10)

ՀՈԳԻՆ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

Հոգին հանդիմանում է մեղքը...

«Եվ Նա, երբ որ գա, աշխարհին կհանդիմանի մեղքի համար և արդարության համար և դատաստանի համար: Մեղքի համար, որովհետև Ինձ չեն հավատում: Արդարության համար, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում, և Ինձ այլևս չեք տեսնի»:
(Հովհաննես 16.8-10)

Հոգին արձագանքում է մեղքին...

- Հոգին արտահայտում է Աստծո <u>հաճությունը</u>, երբ մենք հնազանդվում ենք:

  «Եվ վկայեց Հովհաննեսը և ասաց, թե. «Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես վայր էր գալիս երկնքից և Նրա վրա մնում»»:
  (Հովհաննես 1.32)

  «Որովհետև Նա, Որին Աստված ուղարկեց, Աստծո բանն է խոսում, որովհետև Աստված Հոգին չափով չի տալիս»:
  (Հովհաննես 3.34)

- Հոգին արտահայտում է Աստծո <u>դժգոհությունը</u>, երբ մենք անհնազանդ ենք լինում:

  «Եվ կինը մի որդի ծնեց և նրա անունը Սամփսոն կոչեց, և տղան մեծացավ, և Տերը օրհնեց նրան: Եվ Տիրոջ Հոգին սկսեց նրա վրա գալ Սարաայի և Եսթավուղի մեջտեղը՝ Դանի բանակում»:
  (Դատավորաց 13.24-25)

  «Եվ Տիրոջ Հոգին նրա վրա եկավ, և նա նրան պատառեց, ինչպես մի ուլ կպատառեն, և ձեռքում մի բան չկար: Եվ իր հորն ու մորը չպատմեց, ինչ որ արել էր»:
  (Դատավորաց 14.6)

  «Եվ Տիրոջ Հոգին նրա վրա եկավ, և նա իջավ Ասկաղոն և նրանցից երեսուն մարդ մեռցրեց և նրանց հանդերձներն առավ և տվեց հանելուկը բացատրողներին, և բարկությունը բորբոքվեց, և նա վեր գնաց իր հոր տունը»:
  (Դատավորաց 14.19)

«Նա եկավ մինչև Լեքի, և փղշտացիները աղաղակելով նրան դիմավորեցին: Եվ Տիրոջ Հոգին նրա վրա եկավ, և նրա կռների վրա եղող չվանները կրակով այրված քթանի պես եղան, և կապերը ձեռքերից լուծվեցին: Եվ մեկ էշի ծնոտ գտավ, որ դեռ չորացած չէր, և ձեռքը մեկնեց, առավ այն և նրանով հազար մարդ մեռցրեց: Եվ Սամփսոնն ասաց. «Էշի ծնոտով մեկ խումբ, երկու խումբ, էշի ծնոտով հազար մարդ մեռցրի»: Եվ երբ որ իր խոսքը վերջացրեց, ծնոտը ձեռքից գցեց և այնտեղի անունը Ռամաթ-լեքի կոչեց»:
(Դատավորաց 15.14-15)

«Եվ կինն ասաց. «Սամփսո՛ն, փղշտացիները քեզ վրա եկան»: Եվ նա, քնից զարթնելով, ասաց. «Դուրս գամ և առաջի անգամների պես թոթափվեմ»: Բայց չգիտեր, որ Տերն իրենից գնացել էր»:
(Դատավորաց 16.20)

«Եվ Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից, և Տիրոջ կողմից մի չար ոգի նեղում էր նրան»:
(Ա Թագավորաց 16.14)

- Երբ մեղանչում ենք, <u>տրտմեցնում ենք</u> Սուրբ Հոգուն:

«Եվ մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգուն, Որով կնքվեցիք փրկության օրվա համար»:
(Եփեսացիս 4.30)

- Երբ մեղանչում ենք, խաբում ենք Սուրբ Հոգուն:

«Եվ Պետրոսն ասաց. «Անա՛նիա, ինչի՞ համար սատանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խոսես Սուրբ Հոգուն և ագարակի գնից թաքցնես»»:
(Գործք 5.3)

- Երբ մեղանչում ենք, հակառակվում ենք Սուրբ Հոգուն:

«Խստապարանոցներ և սրտերով և ականջներով չթլփատվածներ, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակվում եք, ինչպես ձեր հայրերը, այնպես էլ դուք»:
(Գործք 7.51)

- Երբ մեղանչում ենք, <u>անարգում ենք</u> Սուրբ Հոգուն:

«Կամ թե չգիտե՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են, որ ձեզանում է, որ Նրան Աստծուց ունեք, և ձերը չեք: Որովհետև մեծ գնով գնվեցիք, ուստի փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնում և ձեր հոգում, որ Աստծունն են»:
(Ա Կորնթացիս 6.19-20)

- Երբ մեղանչում ենք, հանգցնում ենք Սուրբ Հոգուն:

«Հոգին մի՛ հանգցրեք: Մարգարեությունները մի՛ անարգեք»:
(Ա Թեսաղոնիկեցիս 5.19-20)

- Երբ մեղանչում ենք, վիրավորում ենք Սուրբ Հոգուն:

«Էլ որքա՞ն ավելի, կարծում եք, սաստիկ պատժի կարժանանա նա, որ Աստծո Որդուն ոտքի տակ կոխեց և ուխտի արյունը պիղծ համարեց, որով նա սրբվեց, և շնորհքի Հոգուն նախատեց»:
(Եբրայեցիս 10.29)

Հոգին հաղթանակ է տալիս մեղքի նկատմամբ...

- Մենք ապրում ենք Հոգում:

«Որովհետև եթե մարմնավորապես ապրեք, կմեռնեք, բայց եթե հոգով մարմնի գործերը սպանեք, կապրեք»:
(Հռոմեացիս 8.13)

- Մենք պատերազմում ենք Հոգում:

«Որովհետև մեր պատերազմը արյունի և մարմնի հետ չէ, այլ իշխանությունների և պետությունների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ, որ երկնավորների մեջ են: Սրա համար Աստծո սպառազինությո՛ւնն առեք, որ կարող լինեք հակառակ կենալ չարության օրում և ամենը կատարելով հաստատ կանգնել: Արդ հաստատ կանգնե՛ք ձեր մեջքերը ճշմարտությամբ գոտևորված և արդարության զրահը հագած և ձեր ոտները կոշիկ հագած խաղաղության ավետարանի պատրաստությունով: Եվ ամենի վրա հավատքի վահա՛ն առեք, որով կարող լինեք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել: Եվ փրկության սաղավա՛րտն առեք և Հոգու սուրը, որ Աստծո խոսքն է»:
(Եփեսացիս 6.12-17)

- Մենք աղոթում ենք Հոգում:

«Ամեն աղոթքով և աղաչանքով աղո՛թք արեք ամեն ժամանակ Հոգով և սրանում հսկե՛ք բոլոր հարատևությամբ և աղաչանքով ամեն սուրբերի համար»:
(Եփեսացիս 6.18)